Ո՞ՒՐ ԳՆԱՄ ՔՈ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐ. ԾՆՆԴՈՑ 3.8; ՀՈՎՆԱՆ 1.3

8 *Եվ Տեր Աստծու ձայնը լսեցին, որ ման էր գալիս պարտեզում օրվա զով ժամին: Ադամն ու իր կինը թաքնվեցին Տեր Աստծու* ***<u>երեսից</u>*** *(ներկայությունից pānîm) պարտեզի ծառերի մեջ:*

Ել. 33.14-15 - ***14*** *Եւ նա ասեց. Իմ երեսը պիտի գնայ, եւ ես քեզ կհանգստացնեմ:* ***15*** *Եւ Մովսէսն ասեց նորան. Եթէ քո* ***<u>երեսը</u>*** *մեզ հետ չգնա, մեզ այս տեղից մի հանիր:*

Ծննդոցից մինչև Հայտնություն կա մի անփոփոխ ճշմարտություն. Անհնար է փախչել Աստծո ներկայությունից:

Հայտնություն 6.15-16 –Եվ երկրի թագավորները, մեծամեծներն ու հարուստները, հազարապետներն ու զորավորները, բոլոր ծառաներն ու բոլոր ազատները ***<u>թաքնվեցին</u>*** *քարայրներում ու լեռների ծերպերում: Եվ լեռներին ու ժայռերին ասում էին. ,Ընկե՛ք մեզ վրա ու ծածկե՛ք մեզ գահի վրա նստողի երեսից և Գառան բարկությունից:*

Ադամն ու Եվան փորձեցին, Հովնանը նույնպես փորձեց, իսկ Դավիթն ասաց՝

Ո՞ւր գնամ քո Հոգուց և քո ներկայությունից ո՞ւր փախչեմ (Սաղմոս 139.7):

ՓԱԽՈՒՍՏ ԱՍՏԾՈ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ (ՀՈՎՆԱՆ 1.3)

Բայց Հովնանը վեր կացավ, որ Տիրոջ երեսից Թարսիս փախչի: Եվ ***<u>իջավ Հոպպե</u>****, մի նավ գտավ, որ <u>Թարսիս</u> էր գնում, և նրա վարձը տվեց ու* ***նրա մեջն <u>իջավ</u>****, որպեսզի Տիրոջ երեսից նրանց հետ Թարսիս գնար:*

- ***Թարսիսը խորհրդանշում էր շեղում և խորտակում***

«Իջավ Հոպպե... իջավ նավը...»

Եվ վերջում՝ «իջավ ձկան փորի մեջ» (Հովնան 2.1):

Ինչո՞ւ ենք մենք փախչում Տիրոջ ներկայությունից

ԱՆՀՆԱՐ Է ՓԱԽՉԵԼ ԱՍՏԾՈ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ (ՍԱՂՄՈՍ 139.7–10)

7 *Ո՞ւր գնամ քո Հոգուց և քո ներկայությունից ո՞ւր փախչեմ: **8** Եթե վեր ելնեմ երկինք, դու այնտեղ ես, և եթե պառկեմ դժոխքի մեջ, ահա դու այնտեղ ես: **9** Եթե արշալույսի թևերն առնեմ և բնակվեմ **ծովի վերջին ծայրերին**, **10** Այնտեղ էլ քո ձեռքն է առաջնորդելու ինձ, և քո աջն է բռնելու ինձ:*

- *Հովնանը պարզապես մեկ բան հասկացավ՝ որ Աստծո ներկայությունը ամենուր է:*

  Չես կարող նավով փախչել Նրա աչքից:

  Չես կարող խավարի մեջ թաքնվել Նրա լույսից:

Երեմիա 23.24 – Մի մարդ կարո՞ղ է ծածուկ տեղեր թաքնվել, որ ես նրան չտեսնեմ, ասում է Տերը.

ՀՈՎՆԱՆԸ ՓԱԽԱՎ ԱՍՏԾՈ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ, ԲԱՅՑ ՁԿԱՆ ՓՈՐՈՒՄ ՀԱՆԴԻՊԵՑ ՆՐԱՆ. (ՀՈՎՆԱՆ 2.2)

1 *Եվ Հովնանը ձկան փորից աղոթք արեց Տիրոջը՝ իր Աստծուն: **2** Եվ ասաց. **Իմ նեղության մեջ** Տիրոջը կանչեցի, և **նա ինձ պատասխանեց**. <u>անդունդի ընդերքից աղաղակեցի</u>, և դու լսեցիր իմ ձայնը:*

1. ***Աստծո ողորմությունը չդադարեց՝ նույնիսկ Հովնանի փախուստի ժամանակ:***

   *Սաղմոս 23.6 – Այսպես բարիքը և ողորմությունը կգան **<u>իմ հետևից</u>** իմ կյանքի բոլոր օրերին, և Տիրոջ տանը կբնակվեմ ամբողջ կյանքիս ընթացքում:*

   որովհետև Տերն ում սիրում է, խրատում է. Եբր. 12.6

2. ***Աստծո ներկայությունը փոխում է մեզ:***

Ձկան փորի մեջ Հովնանը ապաշխարեց:

ՍԻՄՈՆ՝ ՀՈՎՆԱՆԻ ՈՐԴԻ – ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ (ՄԱՏԹԵՈՍ 16.17)

Սիմոն Պետրոսը պատասխանեց ու ասաց. Դու Քրիստոսն ես՝ կենդանի Աստծու Որդին: Հիսուսը պատասխանեց ու ասաց նրան. Երանի՜ քեզ, Սիմո՛ն, Հովնանի՛ որդի, որովհետև ոչ թե մարմինն ու արյունը հայտնեցին քեզ, այլ իմ Հայրը, որ երկնքում է:

*Ուշադրությո՛ւն դարձրեք. Հիսուսը նրան կոչում է **Հովնանի որդի**:*

Հովնանը փախավ Աստծո ներկայությունից, բայց Աստծո աչքը երբեք չհեռացավ նրանից: Նույնը տեղի ունեցավ նաև Պետրոսի կյանքում:

*Երկուսն էլ, տարբեր ճանապարհներով անցնելով, հասան նույն հայտնությանը. **«Դու ես Քրիստոսը՝ Կենդանի Աստծո Որդին»:***

Աստծո ներկայությունը չի բերում դատապարտություն, այլ՝ նոր սկիզբ:

ԱՍՏԾՈ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ Է ԿՅԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ (ՀՈՎՆԱՆ 3.1-2)

*Եվ Տիրոջ խոսքը **<u>երկրորդ անգամ</u>** հասավ Հովնանին՝ ասելով. Վե՛ր կաց, գնա՛ Նինվե մեծ քաղաքը և նրա մեջ քարոզի՛ր այն պատգամը, որ ես կասեմ քեզ:*

- ***Փառք Աստծուն «երկրորդ հնարավորության» համար:***

  Նույն ձայնը, որից Հովնանը փորձում էր փախչել, կրկին խոսեց նրա հետ:

- ***Սա Տիրոջ ներկայության մեջ գործող շնորհի զորությունն է:***

  Աստծո ներկայությունը մեզ չի լքում մեր ձախողման մեջ:

  Երբ Ադամն ու Եվան թաքնվեցին, Աստված կանչեց՝ «Ադամ, ուր ես» (Ծննդոց 3.9):

Հովնանին էլ նույն ձայնը կրկին կանչեց՝ «Վեր կաց, Հովնա՛ն»:

Նույն կոչը, նույն Աստվածը, բայց՝ փոխված Հովնան:

ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ 21–22

Հայտնություն 21–22 գլուխներում մենք տեսնում ենք ներկայության կատարելությունը. Այլևս չկա բաժանում, այլևս չկա մեղք, այլևս չկա փախուստ:

Աստծու ու Գառան գահը նրա մեջ է լինելու, և նրա ծառաները պաշտելու են նրան: Եվ տեսնելու են նրա երեսը...(Հայտնություն 22.3-4):

Եդեմում մարդը թաքնվեց Աստծո երեսից, բայց Նոր Երյուսաղեմում սրբերը տեսնում են Նրա երեսը բաց և առանց ամոթի:

- *Անկախ ամեն ինչից՝ արդյո՞ք Հիսուսն քո նավակի մեջ է:*
- *Արդյո՞ք դու գտնվում ես կյանքի փոթորկալի ծովում:*
- *Արդյո՞ք դու թիավարում ես սխալ ուղղությամբ: Գուցե եկել է ժամանակը հանձնելու քո կյանքը Հիսուսին:*

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ